# ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*« ՀՀ Արարատի մարզի Վերին Արտաշատի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ-ի*
տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի № 319-Ն որոշմամբ հաստատված պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն *« ՀՀ Արարատի մարզի Վերին Արտաշատի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ-ի* կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

*1) ՀՀ քաղաքացիությունը,*

*2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):*

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

*1) դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,*

*2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,*

*3) հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը,*

*4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով,*

*5) ինքնակենսագրություն:*

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են *« ՀՀ Արարատի մարզի Վերին Արտաշատի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ-ում* **2021թ-ի սեպտեմբերի 16-ից մինչև հոկտեմբերի 7-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10.00-ից մինչև ժամը 15.00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2021թ-ի հոկտեմբերի 21-ին՝ ժամը 14.00-ին**, *« ՀՀ Արարատի մարզի Վերին Արտաշատի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ-ում, հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, գյուղ Վերին Արտաշատ, Արարատյան 99:*

Տեղեկությունների համար դիմել *դպրոցի կառավարման խորհրդի կողմից լիազորված անդամին՝ հեռախոս 099 09 84 84, էլեկտրոնային հասցե՝ aidaaloyan@gmail.com:*